Հայտարարություն

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին >>ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/15-3>>

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ- ի կարիքների համար **քիմիական նյութերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/15-3>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2022թվականի մայիսի 12-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2022թվականի մայիսի 13-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 - Մանրամասնել 51 և 59 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, նշել ախտահանման ոլորտները, ախտահանման ռեժիմները՝ խտանյութից ստացվող աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան և էքսպոզիցիան:

Պարզաբանում N1 – չափաբաժին 51 - Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը- 0.5 լիտր կամ այլծավալի պոլիէթիլենային տարա: 0,5 լիտր խտանյութից պատրաստվում է 2% 5լիտր աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը ոչ պակաս, քան 30 օրէ: Խտանյութից աշխատանքային լուծույթ կարելի է պատրաստել ըստ անհրաժեշտ ծավալի: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Ունեն աթեստզոլեր լուծույթի պիտանելիությունը վերահսկելու համար: Ախտահանիչ նյութի pH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման, բարձր մակարդակի ախտահանման, մանրէազերծ մանիպուլյացիաների համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը մինչև 10րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը մինչև 60րոպե: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Ունենա ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Ունենա Օլիմպուս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին:

Պարզաբանում N2 - չափաբաժին 59- Բաղադրությունը–դիդեցիլ դիմեթիլամոնիումի քլորիդ-2,0-3%, N,N-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլպրոպան 1,3-դիամին 4.8 -5,5% (ՉԱՄ), ինչպես նաև օժանդակող բաղադրիչներ՝ էթիլենդիամինտետրաքացախաթթու, ոչ իոնածին մակերեսային

ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, հոտավետ նյութեր և ջուր: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, տուլարեմիա, լեգիոնելոզ) նկատմամբ ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահությաննախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Փաթեթավորումը 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,25%-անոց, ոչպակաս , քան 400 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ (ներառյալ՝տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը) և հակասնկային (այդթվում՝ կանդիդան դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը մինչև 60 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատվա ծմեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթը պետք է ունենա նաև լվացող և հոտակլանիչ ազդեցություն: Աշխատանքային լուծույթի պատրաստումը սենյակային ջերմաստիճանային պայմաններում՝ոչ պակաս քան 15C-ից մինչ և ոչ ավել քան 25C-ը: Ախտահանումը կատարվի սրբելու, ցողելու և թրջելուեղանակով: Ախտահանիչ նյութիր H-11,0-13,0: Ախտահանիչ նյութի հակամանրէային ազդեցությունը պահպանվի առնվազն 3 ժամվա ընթացքում: Աշխատանքային լուծույթով սենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը անհրաժեշտություն չպետք է լինի և կարելի է կատարել հիվանդի ներկայությամբ: Ինչպես նաև հատակի ընթացիկ մաքրման ժամանակ հետագա ջրով լվանալը լպահանջ չպետք է լինի (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս քան 2 տարի: Մատակարարման պահին ապրանքի ժամկետի 1/2-ի առկայություն: Օգտագործվում է մակերեսների, գույքի ,սպիտակեղենի, լաբորատոր սպասքին այլ պարագաների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/15-3>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյանին

Հեռախոս 055 73-79-20

Էլ. Փոստ avshospitalgyumri@gmail.com

<<ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-22/15-3>> ծածկագրով գնահատման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի: